

ՏԱՐԲԵՐ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐՈՒՄ ՏԵՂԱՅԻՆ ԱՐՅԱՆ ՀՈՍՔԻ, ԱԿՏԻՎԱՑՎԱԾ ՄԻԿՐՈԳԼԻԱՅԻ/ՄԱԿՐՈՖԱԳԵՐԻ ԱՓՈՊՏՈՉԻ ՈՒ ԱՉԱՏ ԵՐԿԱԹԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԱԽՏԱԾԻՆ ԴԵՐԸ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՆԵՅՐՈՏՐԱՎՄԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ

Մանվելյան Յ.Ս.

Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի ԳՀԿ-ի Մորֆոլոգիական հետազոտությունների լաբորատորիա, Հայաստան, Երևան

Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի Նյարդաբանության ամբիոն, Հայաստան, Երևան

Գանգուղեղային վնասվածքները (ԳՈՒՎ) հանդիսանում են մանկական տարիքի հիվանդացության և մահացության ամենավտանգավոր գործոնները: Չորս տարեկանից ցածր երեխաների մոտ ԳՈՒՎ-ը բերում է ավելի ծանր շարժողական ու գիտակցական անբավարարության, քան ավելի մեծ տարիքային խմբերում: Այդ խոցանելիության կենսաբանական պատճառները դեռևս հայտնի չեն: Որոշ տվյալներ վկայում են հակաօքսիդային պաշարների հնարավորությունների մասին: Կան նաև տվյալներ, որ մանկական հասակի հետվնասվածքային բորբոքային պատասխանը տարբերվում է մեծահասակների պատասխանից: ԳՈՒՎ-ի բորբոքման հիմնական նշաններ են՝ հեմատոէնցեֆալիկ պատնեշի անցանելիության բարձրացումը, այտուցը, տեղային արյան հոսքի խանգարումները, ակտիվացված միկրոգլիա/մակրոֆագերը, բջջային ինֆիլտրացիան, ափոպտոզը և այլն: Այս բոլորի զուգակցված դերն ինդեֆինիտիվ ու կազմավորված ուղեղի նեյրոնների և սպիտակ նյութի վնասման, պահպանման մեջ զգալի կախված է ժամանակից և քանակական արտահայտումից: Իմուն համակարգի բջիջների ներթափանցումն ուղեղային հյուսվածք բերում է երկրորդային բորբոքային ռեակցիաների: Հայտնի է, որ կան այդ բոլոր երևույթների արտահայտված տարիքային առանձնահատկություններ:

Տվյալ հետազոտության միջոցով մենք փորձում ենք հասկանալ այդ առանձնահատկությունները: Մենք ցանկանում ենք նոր հետազոտողներին ծանոթացնել նոր եղանակներին, բացահայտել նյարդային համակարգի հասունության տեսանկյունից ուղեղում տեղի ունեցող ռեակցիաները: